

ԼԻՆՍԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ 140,000 ՏՈՒՄ ԿԸ ՆՈՒՐԷ
ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Այսու գոհունակութեամբ կը հաղորդենք թեմիս Հոգեւոր Հովիւներուն, Ծխական Խորհուրդներուն, Տիկնանց Միութեան Մասնաճիւղերուն, Թեմական Պատգամաւորներուն, յարակից կազմակերպութիւններուն եւ մեր համայն հաւատացեալ ժողովուրդին, թէ Բարեսիրական Լինսի Հիմնարկութիւնը շարունակելով իր աստուածահաճոյ առաքելութիւնը, նիւթական նուիրատուութիւններ կատարեց հայ դպրոցներուն:

Ուրախ ենք յայտնելու, թէ Լինսի Հիմնարկութիւնը աւանդութիւն դարձուցած է օգնել հայ դպրոցներուն, ինչպէս նաեւ Հայաստանին՝ Միացեալ Հայկական Հիմնադրամի միջոցաւ:

Երախտագիտութեամբ կը յայտարարենք, թէ անցեալ տարուան Դեկտեմբերին Լինսի Հիմնարկութիւնը 140,000 Տոլարի նուիրատուութիւն մը կատարեց Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Ալֆրէտ եւ Մարկրիթ Յովսէփեան Վարժարանին:

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան եւ Թեմական Խորհուրդը իրենց սրտագին շնորհակալութիւնները կը յայտնեն Լինսի Հիմնարկութեան, որ անգամ մը նիւթական իր օժանդակութեամբ մեծապէս օգտակար հանդիսացայ Յովսէփեան Վարժարանին:

Վստահ ենք այս գումարը իր բարերար դերը պիտի ունենայ վարժարանի կրթական եւ հոգեւոր առաքելութեան յաջողութեան մէջ: